Արձանագրություն N 2

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Երևան, Վրացյան 73,
«Կրթական տեխնոլոգիաների
ազգային կենտրոն» ՊՈԱԿ

20.03.2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արտակ Պողոսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Արաբու Մարքարյանը, Հասմիկ Իփեքչյանը, քարտուղար Լիլիթ Գևորգյանը և «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ժորա Առստամյանը:

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին: Հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանը ներկայացրեց նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝ Ավտոմեքենաների պահպանման ծառայություն՝ մինչև 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

Հանձնաժողովի քարտուղար Լ. Գևորգյանը հայտարարեց, որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից և հանձնաժողովի նախագահ Ա.Պողոսյանին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը.

1/ «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ – ք. Երևան, Տիգրանյան, հեռ. 010 24 96 40, 091 42 38 01, 096 92 41 04, էլ. փոստ Sto-karcomauto@rambler.ru:

3. **Տվյալներ բացված հայտում՝ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

«Կարկոմավտո» ՍՊԸ՝

ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, - ***բավարար***

*բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան –****բավարար***

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

4. **Մասնակցի առաջարկած գինը**

1/ Ավտոմեքենաների պահպանման ծառայություն՝

«Կարկոմավտո» ՍՊԸ՝ 25463700 (քսանհինգ միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գինն առանց ԱԱՀ՝ 21219750 (քսանմեկ միլիոն երկու հարյուր տասնինը հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

5. **Մասնակցի կողմից համապատասխան տեղեր զբաղեցնելու վերաբերյալ**

Հանձնաժողովը որոշեց՝

1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **«Կարկոմավտո» ՍՊԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

6. **Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ**

Հանձնաժողովը որոշեց ոչ ուշ քան հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ համաձայն հրավերի հավելված 6-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

7. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել 2019թ. մարտի 27-ին ժամը 15:00-ին, հասցեն՝ ք. Երևան, Ս. Վրացյան 73 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Պողոսյան

անդամներ՝ _____ Ա. Մարքարյան

_____ Հ. Իփեքչյան

քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան